# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2
## « ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 16/03» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Գյումրի

25.11.2016թ.
ժ. 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Մ. Ասատրյան |
| Հանձնաժողովի անդամներ | Ն. Հայրապետյան, Ք. Մանուկյան, Կ. Մերոբյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Խ. Խնձրցյան |

### 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Մ. Ասատրյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Բանակցային ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
4. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:
5.Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
7. Առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
8. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
9. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

### 2. Բանակցային ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:

(Մ. Ասատրյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.
Սահմանված ժամկետում և բանակցային ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան ընթացակարգի հայտեր են ներկայացրել.

| N | Մասնակցից կազմակերպության | | |
|---|---|---|---|
| | Անվանումը | Հարկ վճարողի հաշվառման համարը | Էլ.-փոստ |
| 1 | <<Պապ և Դավիթ>> ՍՊԸ | 06922391 | movsesyan@mail.ru |
| 2 | <<Շինարար>> ՍՊԸ | 05511545 | nandranik@mail.ru |
| 3 | <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ | 08404037 | Buildingdep1@mail.ru |

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

### 3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:

(Մ. Ասատրյան)

Հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (որոնց Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր), կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝ <<Պապ և Դավիթ>> ՍՊԸ, <<Շինարար>> ՍՊԸ և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

### 4. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

(Մ. Ասատրյան)

Բավարար են գնահատվել <<Շինարար>> ՍՊԸ և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ մասնակիցների հրավերով սահմանված պայմաններին համապատասխանող հայտերը: Բավարար գնահատված հայտերում առկա են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկները և հայտի ապահովումները:

<<Պապ և Դավիթ>> ՍՊԸ հայտում ընկերության կողմից ներկայացված <<ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ>> (հավելված 9) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

**5. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:**

(Մ. Ասատրյան)

Հրավերով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր կազմել և ներկայացրել են <<Շինարար>> ՍՊԸ և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ:

<<Պապ և Դավիթ>> ՍՊԸ հայտում՝ <<ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ>> (հավելված 9, կցվում է) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան (բացակայում է համաձայնագրի համարը, օրը, ամիսը և տարեթիվը) և հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է հայտը:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

**6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:**

(Մ. Ասատրյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Պայմանագիրը կատարելու համար հրավերով սահմանված պահանջներին համապատասխան յուրաքանչյուր մասնակից ներկայացրել է հետևյալ գնի առաջարկը /կցվում են/:

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները | | |
|---|---|---|---|---|
| | | ՀՀ դրամ | | |
| | | Գինն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր |
| 1 | <<Պապ և Դավիթ>> ՍՊԸ | 32848118.0 | - | 32848118.0 |
| 2 | <<Շինարար>> ՍՊԸ | 35742000.0 | 7148400.0 | 42890400.0 |
| 3 | <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ | 36524400.0 | 7304880.0 | 43829280.0 |

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

**7. Առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:**

(Մ. Ասատրյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Առաջին և երկրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցներ ճանաչել.

1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<Շինարար>> ՍՊԸ՝ որպես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով:

2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ՝ որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցին:

Որպես հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին առաջարկվել է պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ shirak.qaghshin@mta.gov.am, 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցների ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

**8. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Մ. Ասատրյան)

Ընդունել ի գիտություն, որ. հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

**9. Հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին**

(Մ. Ասատրյան)

Հաստատել հանձնաժողովի նիստերի անկացման հետևյալ ժամանակացույցը.

Գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ նիստը հրավիրել ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 16/03 ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի կողմից՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ shirak.qaghshin@mta.gov.am որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 12:00-ին, ՀՀ Շիրակի մարզպետարանում հասցե՝ ք. Գյումրի, գ. Նժդեհ 16:

Քվերակությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Մ. Ասատրյան

Անդամներ՝ Ն. Հայրապետյան

Ք. Մանուկյան

Կ. Սերոբյան

Քարտուղար՝ Խ. Խնձրցյան

Հավելված 9
ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 16/03 ծածկագրով
բանակցային ընթացակարգի հրավերի

ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N
(մասնակցության հայտի ապահովում)

ք. Վանաձոր <<_____>>_____________20 թ.

,Պապ և Դավիթ,,ՍՊԸ ի դեմս Ընկերության տնօրեն՝ Վահագն Սաքանյանի անձ.AK0386051 տրվ 09,10,2009թ 033-ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ Շիրակի մարզպետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ Ախուրյանում բնակարանային շինարարության իրականացման լրացուցիչ շինարարական աշխատանքների (3 անավարտ շենքերի կառուցում) ձեռքբերման ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 16/03 ծածկագրով ԲԸՀ գնման ընթացակարգին:

1.2 Որպես մասնակցության հայտի ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածի 2-րդ մաս) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Բանկի կողմից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև գնման ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագրի ուժի մեջ մտնելը կամ գնման ընթացակարգում հաղթող չճանաչվելը կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

,,Պապ և Դավիթ,, ՍՊԸ՝
ՀՀ Լոռու մարզ,գ.Գուգարք 3-րդ փող 9/2
ԱմերիաԲանկ Վանաձոր Մ/Ճ
Հ/Հ 1570013088300100
ՀՎՀՀ 06922391
տնօրեն՝ ____________
____________ (ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ ____________
____________ (ստորագրություն)

Կ.Տ

Digitally signed by SAKANYAN VAHAGN 3810700037
Date: 2016.11.24 22:56:56

Հավելված 4

ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 16/03 ծածկագրով

բանակցային ընթացակարգի հրավերի

# Գ Ն Ի   Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 16/03 ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

Պապ և Դավիթ,, ՍՊԸ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

| Չափա-բաժինների համարները | Աշխատանքի անվանումը | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ* | Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | ԱԽՈՒՐՅԱՆՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (3 ԱՆԱՎԱՐՏ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ | 30988791 | 1859327 | - | 3 32848118 /երեսուներկու միլիոն ութ հարյուր քառասունութ հազար մեկ հարյուր տասնութ/ |

*Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:

,,Պապ և Դավիթ,, ՍՊԸ –ի տնօրեն՝ Վ. Սաքանյան

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը՝ Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

Digitally signed by
SAKANYAN
VAHAGN
3810700037
Date: 2016.11.24
22:35:51

Հավելված 4

ԵՄ ԲԸՀԱՇՁԲ 16/03 ծածկագրով

բանակցային ընթացակարգի հրավերի

# Գ Ն Ի   Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված ԵՄ ԲԸՀԱՇՁԲ 16/03 ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կցվելիք պայմանագրի նախագիծը,
<<Շինարար>> ՍՊԸ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով.
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

(ՀՀ դրամ)

| Չափա-բաժինների համարները | Աշխատանքի անվանումը | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ* | Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6=3+4 |
| 1 | Ախուրյանում բնակարանային շինարարության իրականացման լրացուցիչ շինարարական աշխատանքներ (3 անավարտ շենքերի կառուցում) | 32200000.0 | 3542000.0 | 7148400.0 | Քառասուներկու միլիոն ութ հարյուր իննսուն հազար չորս հարյուր 42890400.0 |

***Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա վերը պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:**

<<Շինարար>> ՍՊԸ տնօրեն՝ Ալբերտ Նալբանդյան ______________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

Digitally signed by NALBANDYAN ALBERT 1103540602
Date: 2016.11.24 11:07:48 AMT

**Հավելված 4**
**ԾՄ ԲԸՀԱԾՁԲ 16/03 ծածկագրով**
**բանակցային ընթացակարգի հրավերի**

# ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված ԾՄ ԲԸՀԱԾՁԲ 16/03 ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, Թիվ 1 Շինվարչություն ԲԲԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

| Չափաբաժինների համարները | Աշխատանքի անվանումը | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ* | Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6=3+4+5 |
| 1 | Ախուրյանում բնակարանային շինարարության իրականացման լրացուցիչ շինարարական աշխատանքներ (3 անավարտ շենքերի կառուցում) | 33204000 | 3320400 | 7304880 | 43829280 Քառասուներեք միլիոն ութ հարյուր քսանինը հազար երկու հարյուր ութսուն |

*Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:*

**Թիվ 1 Շինվարչություն ԲԲԸ**

**Տնօրեն՝ Հ. Մնացականյան** **24 Նոյեմբեր, 2016**

MNATSAKANYAN HRAYR 3112830288

Digitally signed by MNATSAKANYAN HRAYR 3112830288
Date: 2016.11.24 15:59:31 AMT